

կ'ընենք Ս. Եպիփանի վկայութիւնը, որ համիմաստ կը խօսի Որոզինէսի. ինչպէս նաև Յիսուսի մանկութեան անվաւեր Աւետարանին յիշատակութիւնը, որոնցմով կը հասկցուի թէ այրին գոյութիւնը ո՛չ միայն աւանդութեամբ, այլ նաև Աւետարանով և Ս. Հարց միաձայն վկայութեամբ կը հաստատուի Բ. դարէն մինչև Դ. դար:

Քրիստոսի ծննդեան այրը սակայն, Բ. դարու առաջին քառորդին, յայտնի վկայութեամբ մը, փոփոխութիւն մը կրած է առանց ջնջելու Քրիստոսի ծննդեան աւետարանական պատմութեան եւ անոր հիասքանչ ղէպքերու յիշատակները: 132 ին Պարքոզիպոյի ապստամբութենէն վերջ Ադրիանոս կայսրը իր Յուլիոս Սևերոս մեծ զօրապետին հրամանատարութեամբ միանգամ ընդ միշտ Երուսաղէմի մէջ հրէական ոյժերը ջախջախելով՝ քաղաքին հին դիմագիծը կը փոխէր, վերածելով զայն հռոմէական քաղաքի մը, իր բոլոր հաստատութիւններով: Ան քարուքանդ ըրաւ Երուսաղէմը, և նոյն իսկ անոր անունը փոխելով կոչեց, Էլիս Կարիոլիս. և վերահաստատեց հո՛ն հեթանոսութիւնը, ինչպէս Սողոմոնեան Տաճարին մէջ, նոյնպէս Գողգոթայի մէջ և այլուր գետեղեց հռովմէական կուռքեր, և Տնօրինական Ս. Տեղիք վերածուեցան հեթանոսական մեհեաններու: Բեթղեհէմի Ս. Ծննդեան այրին մէջ ալ Ադրիանոս հաստատեց Ազոնիսի կամ Թամմուզի կուռքը, այրին չորս կողմը վերածելով մայրաստանի մը: Այս մասին Կիւրեղ Երուսաղէմացին իր Կոչումն Ընծայութեան գիրքին մէջ (Ճառ ԺԲ.) Բեթղեհէմի այրին վրայ խօսած ժամանակ, յայտնապէս կը գրէ 347 ին, ըսելով թէ «Զի յառաջ քան զսակաւ մի ամաց, մայրի ունէր գտեղին»: Նուիրական այրին չորսը հաստատուած էր այս անտառը և նուիրուած էր Ազոնիսի, որպէս զի Եգիպտոսէն և սիւրիական ափունքներէն Երուսաղէմ և Բեթղեհէմ հաստատուող նորիկները զային նշանաւոր օրերու մէջ վայելելու Ազոնիսի նկատմամբ իրենց բուռն յուզումները, զոր ճաշակած էին Աղեքսանդրիոյ, Պիպլոսի և այլ տեղեաց հեթանոսական սրբավայրերու մէջ:

Բայց վերի պարագան աւելի լաւ կը բացատրէ Բեթղեհէմի մեծ մենակեացը Յերոնիմոս Դ. դարուն գրուած իր մէկ նամակին մէջ. «Ադրիանոսէն մինչև Կոստանդիանոս, գրեթէ 180 տարիներ, Յարութեան տեղոյն վրայ պաշտուեցաւ Արամազդէ